

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՄՆ-Ի ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՅԵՏՈ

### ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Առաջին աշխարհամարտից հետո Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը, իր վրա կրելով պատերազմի աղետալի հետևանքների անմիջական ազդեցությունը, հայտնվեց սոցիալ-տնտեսական անասելի ծանր իրավիճակում: Ամբողջությամբ կազմալուծված էր երկրի տնտեսությունը և ստեղծված վիճակն էլ ավելի էր բարդանում մոտ կես միլիոնի հասնող անօթևան գաղթականների առկայության պայմաններում:

Պատերազմի ավարտը ազդեցության մեծացման նոր հորիզոններ բացեց հաղթող տերությունների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համար: Տարածաշրջանում վերջիններիս աշխարհաքաղաքական նկրտումների կիզակետում էր նաև նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը:

Քաղաքական զարգացումներին զուգընթաց ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում թափ առավ հայանպաստ շարժումը, որի հիմքերը դրվել էին դեռևս պատերազմի տարիներին:

Որպես տարածաշրջանում ամերիկյան մարդասիրական օգնության դրոշակակիր հանդես էր գալիս Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն (Ամերկոմ), որը ստեղծվել էր 1918 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի որոշմամբ, մինչ այդ գործող և Առաջին համաշխարհային պատերազմից տուժած երկրներին օգնություն ցույց տվող Հայաստանի և Սիրիայի նպաստի ամերիկյան կոմիտեի հիմքի վրա<sup>1</sup>:

Մինչև 1919 թ. կեսերը ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը մարդասիրական օգնություն էր տրամադրվում նաև Ամերիկայի նպաստամատույց վարչության (ԱՆՎ) միջոցով, որը հիմնադրվել էր 1919 թ. փետրվարի 24-ին՝ հայերին, սիրիացիներին, հույներին և Փոքր Ասիայի մյուս քրիստոնյա և հրեա ազգաբնակչությանը օգնելու նպատակով ԱՄՆ-ի հարյուր միլիոն դոլարի հատկացումը որպես օրենք ամրագրելու շնորհիվ:

Հատկանշական է, որ ԱՆՎ-ի յուրաքանչյուր բեռնախմբի համար հայկական կառավարությունը տալիս էր պարտամուրհակ, որը պետք է պահվեր ԱՄՆ-ի գանձարանում, մինչդեռ Ամերկոմի ներդրումները ամերիկյան ժողովրդի ընծաներն էին հայ ժողովրդին<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Ս. Ավետիսյան**, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Եր., 2009, էջ 6:

<sup>2</sup> Տե՛ս **Ռ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն: Առաջին տարին, 1918-1919, հատոր I, Եր., 2005, էջ 148-153:

1919 թ. ամռանը, նախագծի ժամկետը լրանալուց հետո, ԱՆՎ-ն դադարեցնում է իր գործունեությունը՝ Հայաստանում միսիոներաբարեգործական առաքելության մենաշնորհը թողնելով Ամերկոմին:

Մեծ Բրիտանիայում ծավալված հայանպաստ շարժումը մարմնավորում էր Անգլկոմը: Վերջինս կազմված էր անգլիական մի քանի հայասիրական և հասարակական ու բարեգործական կազմակերպություններից, որոնց թվում էին Էմիլիա Ռոբինզոնի հիմնած «Հայկական ընկերությունը» («Armenian Society»), Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդը («Lord Mayor's Fund»), «Մանչեստրի կանանց ընկերությունը» և այլն<sup>3</sup>:

Այն փաստը, որ Ամերկոմը, ինչպես նաև ԱՆՎ-ն ձևավորվել էին ԱՄՆ-ի Կոնգրեսի որոշմամբ, ինքնին վկայում է պետական մակարդակով դրանց առաքելության առանձնակի կարևորման մասին, մինչդեռ Անգլկոմը ձևավորվել էր որպես հասարակական նախաձեռնությունների արդյունք:

Սույն հոդվածում կփորձենք հայապահպանության խնդրում ամերիկյան և բրիտանական գործոնի ազդեցությունը դիտարկել տարածաշրջանում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության համատեքստում, խնդիր ունենալով վեր հանել դրանից բխող փաստացի դրական և բացասական հետևանքների հարաբերակցությունը:

Նշյալ տրամաբանությունից ելնելով՝ նախ անդրադառնանք ստեղծված իրավիճակում օբյեկտիվորեն ձևավորված այն քաղաքական գործոններին, որոնք պայմանավորեցին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կողմից Հայաստանում մեծաքանակ գաղթականների և որբերի խնամատարության իրականացումը:

Առաջին աշխարհամարտից հետո Հայաստանի կառավարությունը հանդգլեց, որ արևմտյան պետությունները Անդրկովկասում հետապնդում են միայն սեփական շահերը: Հայ ժողովրդին համարելով անուղղելի ռուսասեր՝ Անդրկովկասում տեր ու տնօրեն դարձած բրիտանական հրամանատարությունն ավելի շատ օժանդակում էր տարածաշրջանի հակառուսական ուժերին<sup>4</sup>: Անգլիական իշխանությունները չէին դադարում Անդրկովկասը իրենց գաղութը դարձնելու հնարավորությունները հետախուզելուց: 1919 թ. Անդրկովկասում գտնվող զեներալ Գեորգ Միլնը, որը հանձնարարություն ուներ երկրամասի հանրապետությունների քաղաքական տրամադրությունների մասին ստույգ տեղեկություններ հաղորդելու իր կառավարությանը, Լոնդոն ուղարկած իր զեկուցագրում նշում է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստ է անել այն ամենը, ինչ ցանկանում է բրիտանական հրամանատարությունը»<sup>5</sup>:

<sup>3</sup> Տե՛ս **Ս. Ավետիսյան**, Փաստաթղթեր 1920-ական թվականներին Անգլիական օգնության կոմիտեի (Անգլկոմ)՝ Հայաստանում ծավալած գործունեության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1(117), 2011, էջ 68:

<sup>4</sup> Տե՛ս **Է. Զոհրաբյան**, Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ.- 1920 թ. ապրիլ), Եր., 2002, էջ 70:

<sup>5</sup> **Գ. Գալոյան**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 56-57:

ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հավաստիացումները այն մասին, որ Փարիզի խաղաղության խորհրդաժողովում ԱՄՆ-ը ևս պաշտպանելու է Հայ դատը, հանդիսացան այն հիմքը, որի վրա կառուցվեց Հայաստանի առաջին Հանրապետության արևմտամետ կուրսը: Տնտեսական ու ռազմավարական շահերով Ռուսաստանի հետ կապված Հայաստանը քաղաքականապես կողմնորոշվել էր դեպի Արևմուտք: Դա, ակադեմիկոս Գ. Գալոյանի բնորոշմամբ, անհեռատես և անհեռանկար քաղաքականություն էր, որը հետագա չարիքների աղբյուր էր հանդիսանալու<sup>6</sup>:

Այսպիսի զարգացումների պատկերի վրա էին առաջին աշխարհամարտին հաջորդող տարիներին իրենց գործունեությունը ծավալում ամերիկյան և բրիտանական բարեգործական կազմակերպությունները: Ընդ որում, ի տարբերություն Ամերկոմի, որը բաժանմունքներ ուներ նաև Անդրկովկասի մյուս հանրապետություններում, Անգլկոմի գործունեությունը սահմանափակվում էր միայն Հայաստանով<sup>7</sup>, հետևաբար մարդասիրական գործունեությանը զուգահեռ այս կազմակերպության կողմից հետապնդվող քաղաքական շահերի ծանրության կենտրոնը ևս Հայաստանն էր:

Ստեղծված իրավիճակը, անշուշտ, պարարտ հող էր ծառայում նաև Հայաստանում արևմտյան գաղափարական արժեքների տարածման համար: Այն, որ և՛ Ամերկոմը, և՛ Անգլկոմը տարածաշրջանում, մասնավորապես Հայաստանում, զուտ մարդասիրական և բարեգործական առաքելությունից բացի, հետապնդում էին նաև ֆինանսավորող երկրների անմիջական շահերից բխող հեռահար նպատակներ՝ որպես հակակշիռ ավանդաբար ձևավորված ռուսամետ տրամադրվածության, ակնյայտ է դառնում նրանց գործունեության առանցքային գծերի ուսումնասիրությունից:

Մասնավորապես՝ իր նոթերում Ամերկոմի գլխավոր քարտուղար Չ. Վիքրին գրել է. «Մենք փրկել ենք միլիոնավոր կյանքեր, բայց ոչ մի օգուտ չունի այդ կյանքերի զուտ ֆիզիկական փրկությունը: ...Մենք փրկել ենք կյանքը, այժմ մեր խնդիրն է կառուցել այն: Մերձավոր Արևելքի ավերակների վրա մեծանում է որբերի մի սերունդ, որը պետք է հիմքը լինի գալիք հարյուրամյակների»<sup>8</sup>: Վիքրին նաև նշում է. «Միայն ապագա սերունդը կարող է դատել, որքանով ենք մենք հաջողությամբ ներշնչել ապագա աշխարհաքաղաքացիների և լիդերների սրտերում այն *միջազգային գիտակցությունը և բարի կամքը* (ընդգծումը՝ Ա. Ս.), որից կախված է ապագա աշխարհի խաղաղությունը և առաջընթացը»<sup>9</sup>: Վիքրիի այս դրույթը Չ. Բարթոնի «Մերձավոր Արևելքի Ամե-

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 60:

<sup>7</sup> Տե՛ս **Յ. Մելիքսեթյան**, Արևմտահայերի բռնազաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Եր., 1975, էջ 102:

<sup>8</sup> **Charles Vernon Vickrey**, International Golden Rule Sunday, A Handbook, New York, George H. Doran Company, 1926, p. 44.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 36:

րիկյան նպաստամատույց կոմիտեի պատմությունը» աշխատության մեջ ձևակերպված է նաև որպես Ամերկոմի գլխավոր գաղափարական արժեք<sup>10</sup>: Ավելին, Բարթոնի աշխատության մեջ մի առանձին գլուխ հատկացված է միայն որբերի մեջ մարդկային և մնայուն արժեքների ձևավորման ուղղությամբ Ամերկոմի առաքելության նկարագրությանը:

Ակնհայտ է, որ որքան էլ հումանիստական հնչեն վերոնշյալ ձևակերպումները, դրանցում կարմիր թելի պես անցնում է Ամերկոմի՝ հայ որբերին սեփական արժեքների համաձայն դաստիարակելու բացահայտ հակվածությունը:

Այդ մասին են վկայում նաև փաստերը. մասնավորապես՝ 1919 թ. ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետության և Ամերկոմի միջև ստորագրված պայմանագրի<sup>11</sup> համաձայն՝ Հայաստանի տարածքում գտնվող բոլոր որբանոցները հանձնվել են Ամերկոմի հոգածությանը, սակայն որոշ ժամանակ անց ծագած տարածայնությունների հետևանքով վերանայվել է պայմանագիրը և կրթադաստիարակչական գործի վերահսկողությունը վերապահվել ՀՀ կառավարությանը:

Նշյալ հիմնախնդրից բխող հրամայական էր նաև 1922 թ. սեպտեմբերի համաձայնագրով Ամերկոմի իրավունքների սահմանափակումն ու նրա գործունեությունը հսկողության տակ վերցնելը, քանզի մինչ այդ որբանոցներին կից ամերիկյան դպրոցներում խիստ ցածր մակարդակի վրա էր գտնվում երեխաների ուսուցումն ու դաստիարակությունը, տիրում էր բուրժուական բարեգործությանը հատուկ ռեժիմ: Երեխաներին անընդհատ ներշնչվում էր այն միտքը, թե նրանց կերակրում ու հագցնում են ամերիկյան բարեգործները, որոնք, որպես բարեպաշտ քրիստոնյաներ, օգնության ձեռք են մեկնում դժբախտ հայ որբերին, ուստի երեխաները և նրանց ղեկավարները պարտավոր են դեպի իրենց բարերարները տածել քրիստոնեական սիրո ու երախտագիտության անկեղծ զգացմունքներ<sup>12</sup>:

Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Ամերկոմում ղեկավար բազմաթիվ պաշտոններ զբաղեցրած Վարազդատ Տերոյանի կողմից կատարված դիտարկումները նշված կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Իր հուշերում Տերոյանը գրում է. «Բարեգործությունը բուրժուական-կապիտալիստական հասարակարգի անբաժան և անխուսափելի ինստիտուտն է: ... Ամերիկյան այնքան հարուստ է, որ կարող է տարեկան մի քանի միլիոն դոլար ծախսել՝ Ամերիկայի և ամերիկանիզմի «անշահախնդիր» և մեծահոգի պրոպագանդան ծավալելու ամբողջ աշխարհի վրա: Դրա օգուտները, եթե անմիջական չեն, բայց իրական են և անժխտելի: ... Իմպերիալիստական պրոպագանդի առաջնահերթ, անմիջական և հրամայական պահանջը այն կեն-

<sup>10</sup> Տե՛ս **James L. Barton**, Story of Near East Relief (1915-1930), New York, The Macmillan Company, 1930, էջ 329:

<sup>11</sup> Տե՛ս **Ս. Ավետիսյան**, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., էջ 80:

<sup>12</sup> Տե՛ս **Յ. Մելիքսեթյան**, նշվ. աշխ., էջ 104:

դանի և ոգևորող շունչն էր, որ իշխում էր Ամերկոմի բոլոր գործերի և անձնավորությունների վրա՝ Նյու Յորքից սկսած մինչև Անդրկովկաս և Պարսկաստան»<sup>13</sup>:

Հետաքրքիր է նաև Ամերկոմի և Անգլկոմի հարաբերությունների Տերոյանի բնորոշումը, համաձայն որի՝ «Անգլկոմը Ամերկոմի հետ պահպանում էր սերտ և մտերմական հարաբերություն, ոչ միայն նրանց կուլտուր-կրթական հիմնարկներից օգտվելու, այլև շատ ավելի խոր և ներքին շարժառիթներով: Այդ հարաբերության բնորոշ գիծը մի քիչ հակասական է. մեկ կողմից՝ սերտ և մտերմական, մյուս կողմից՝ քննադատական, մրցակցական և նույնիսկ դավադրական-թշնամական: Այդ երկու կոմիտեներն էլ միասնական և ընդհանրական շահեր ու վնասներ ունեին այն չափով, ինչ չափով որ երկուսն էլ գործ ունեին որակով ցածր, երկրորդ կարգի մարդկանց հետ, մի երկրի հետ, որ կուլտուրապես շատ հետամնաց է և քաղաքականապես դեռևս չի ամրապնդված: ...Բայց հենց որ խնդիրը գալիս էր այն մասին, թե այս երկիրը մտել է վերահաս գաղութացման ժամանակաշրջանը, հենց որ պետք էր լինում հաշվի առնել շատ մոտավորապես ապագայի հեռանկարները, Անգլկոմը մանավանդ, իբրև ավելի թույլ և փոքր կազմակերպություն, անկարող էր պատշաճ կերպով թաքցնել իր քննադատական, պախարակող և հակադիր վերաբերմունքը դեպի Ամերկոմը»<sup>14</sup>:

Իհարկե, նշված բնորոշումներում առկա է խորհրդային գաղափարախոսության դրոշմը, ինչը դրսևորվում է կապիտալիստական հասարակարգի նկատմամբ անթաքույց հակակրանքով, սակայն անժխտելի է նաև ճշմարտության այն տարրը, որը առկա է այդ կազմակերպությունների աշխատանքի և կառուցվածքի մասին ականատեսի և անմիջական մասնակցի տված տեղեկություններում:

Ամերկոմի հեռահար քաղաքական նպատակների մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ արդեն 1920 թ. օգոստոսից այն դադարեցնում է իր գաղթականախնամ գործունեությունը և իր պահեստներում մնացած մթերքը, հագուստն ու դեղորայքը օգտագործում բացառապես իր խնամքի տակ գտվող որբանոցների և դրանց կից հիվանդանոցների համար<sup>15</sup>: Նշենք, որ մինչ այդ Ամերկոմի կողմից և նրա միջոցներով հովանավորվում էր նաև գաղթականների և չքավոր ազգաբնակչության մի մասը:

Ակնհայտ է, որ մատաղ սերնդի խնամքի ստանձնումը հնարավորություն էր տալիս նրանց դաստիարակելու այն արժեքներին և գաղափարախոսությանը համապատասխան, որոնց կրողներն էին Ամերկոմի աշխատակիցները:

<sup>13</sup> **Վարազդատ Տերոյան**, Իմպերիալիստական ժիզեռնակներ: Միսիոներա-բարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Եր., 2008, էջ 66-67:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 89-90:

<sup>15</sup> Տե՛ս **Ս. Ավետիսյան**, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., էջ 79:

Ամերիկյան դպրոցների ավանդույթներով երեխաների դաստիարակության դեպքում բոլորովին անտեսվում էր այն հանգամանքը, որ կյանք մտնելով՝ հայ երեխաները ապրելու էին միանգամայն այլ պայմաններում ու միջավայրում, որ նրանց համար հետագայում շատ դժվար էր լինելու հարմարվել շրջապատին, մերվել ավանդական հայ ընտանիքներում ազգային ոգով, ազգային սովորույթներով դաստիարակված իրենց հասակակիցներին<sup>16</sup>:

Ամերիկոնի գործունեությամբ պայմանավորված վերոնշյալ վտանգների մասին է վկայում նաև ժամանակի պատմական անցքերի ականատես Երվանդ Կարիկյանի «Աշխարհաքաղաքացիները» վերտառությամբ հոդվածը, հասցեագրված «Կոչնակ Չայաստանի» և «Պայքար» հանդեսներին, որտեղ նա, բոլորովին չանտեսելով հայապահպանության գործում Ամերիկոնի մեծ վաստակը, արդարացիորեն նշում է նաև դրանից բխող թերությունները, որոնք մասնավորապես վերաբերում են Յունաստանում և Սիրիայում ապաստանած հայ որբերի վերադարձին: Յոդվածում ասվում է. «Յունաստանի և Սիրիոյ մեջ պահած որբերը կը պահէ իրեն համար, իւր ծրագրերուն ու աշխարհաքաղաքացիութեան նպատակներուն համար, անոնցմէ դեռ մեկ հատ Չայաստան չը դրկեց եւ դրկելու ալ բնավ միտք եւ տրամադրութիւն ցոյց չտուաւ. ընդհակառակը, ամէն տեղ դրկեց եւ դրկելը քաջալերեց, իսկ երբ կարգը Չայաստանին եկավ, միշտ խուսափողական գտնուեցաւ, միշտ մեզ օրորեց, ժամանակ վաստկեցաւ ու մոռցնել տուաւ եւ դեռ կը շարունակէ նոյնը»<sup>17</sup>:

Հաշվի առնելով, որ որբերի նման դաստիարակությունը հղի է բազում անցանկալի հետևանքներով, 1923 թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում Խորհրդային Չայաստանի կառավարության և Ամերիկոնի միջև կնքված երկրորդ պայմանագրով ավելի են խստացվում Ամերիկոնի գործունեության սահմանափակումները: Մասնավորապես, պայմանագրի 4-րդ կետով սահմանվում էր. «Մերձաւոր Արուելքի Ամերիկեան Նպաստամատոյց Մարմնի գործունեութիւնը խստօրեն պետք է սահմանափակուի օգնութեան գործով և ոչ մի դէպքում չի կարող քաղաքական, առուտրական և կրօնական քարոզչութեան բնոյթ կրել»<sup>18</sup>:

Ինչ վերաբերում է Անգլիկոնին, ապա Ամերիկոնի համեմատությամբ նրա գործունեության ծավալների ունեցած ավելի նեղ շրջանակները պայմանավորում էին նաև ազդեցության ավելի ցածր մակարդակ, սակայն հատկանշական է, որ որակական առումով Անգլիկոնի հովանու տակ գտնվող որբանոցը աչքի էր ընկնում կազմակերպվածության և կարգապահության ավելի բարձր մակարդակով: Տերոյանի վկայությամբ՝ «Անգլիկոնի որբանոցը լավ կազմակերպված, կահավորված և

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 111:

<sup>17</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 235, թթ. 16-17:

<sup>18</sup> Նույն տեղում, ֆ. 430, ց. 1, գ. 1280, թ. 2:

կարգավորված մի որբանոց էր և ոչ մի նմանություն չունեի Ամերկոմի անկարգ ու անկազմակերպ խառնարանների հետ, որոնց, լավագույն դեպքում, գիշերային ապաստարան կամ հանրակացարան կարելի էր անվանել»<sup>19</sup>:

Վերլուծության տրամաբանությունը չխախտելու համար, ի հակակշիռ Ամերկոմի և Անգլկոմի գործունեության թերի կողմերի մասին վկայող վերը բերված փաստերի, ներկայացնենք նաև այն հսկայական օգնության ծավալները, առանց որի մեր երկրին անհամեմատ ավելի դժվար կլինեի դիմակայել Առաջին աշխարհամարտին հաջորդած շրջանի անասելի դաժան մարտահրավերներին: Պատկերավորության համար փաստերը ներկայացնենք թվերով:

Ըստ «Նյու Յորք Թայմս» հայտնի պարբերականի հրապարակած նյութերի՝ 1920 թ. տվյալներով՝ ամերիկյան և բրիտանական կառավարությունների ջանքերով լուծված էր 50000 հայ որբերի սննդի խնդիրը, որի համար օգոստոս ամսվա դրությամբ ծախսվել էր 21,012,000 դոլար, որից՝ 20,452,000 դոլարը Միացյալ Նահանգների, 560,000 դոլարը՝ Մեծ Բրիտանիայի կողմից<sup>20</sup>:

Մինչ այդ, Հայաստանի և Սիրիայի նպաստի ամերիկյան կոմիտեի կողմից Մերձավոր Արևելքի և Կովկասի որբերի խնամատարության համար հատկացվել էր 3,600,000 դոլար<sup>21</sup>:

1920 թ. դրությամբ Ամերկոմը որբերի և գաղթականության համար Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում ընդհանուր առմամբ ուներ 39 հոսպիտալ<sup>22</sup>: Այդ թվում՝ միայն Երևանում ուներ 6 հիվանդանոց, ընթացքի մեջ էր 7-րդի բացումը, գործում էր 1 ամբուլատորիա: 3 որբանոցներին կից ևս գործում էին հիվանդանոցներ: Քանաքեռում գործում էր 1 հիվանդանոց, Ղամարլուում՝ 1 հիվանդանոց և 1 ամբուլատորիա, Դարաչիչակում և Նոր Բայազետում՝ համապատասխանաբար՝ 2 և 1 հիվանդանոց, երկուական որբանոց-հիվանդանոցներ<sup>23</sup>:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ 1919 թ. հունվարի դրությամբ Հայաստանում գործում էր Ամերկոմի 7 որբանոց՝ 540 որբերով<sup>24</sup>: 1921 թ. մայիսի դրությամբ Ամերկոմի որբանոցների որբերի թիվը արդեն հասնում էր շուրջ 20000-ի, իսկ մինչև 1923 թ. այդ թիվը կազմում էր 22615<sup>25</sup>: 1924 թ. Ամերկոմի որբանոցներում չափահաս որբերի թիվը հասնում էր 8275-ի, իսկ պետական որբանոցների չափահաս որբերի թիվը՝ միայն 816-ի<sup>26</sup>: 1922 թ. ապրիլից մինչև տարեվերջ Հայաս-

<sup>19</sup> Վարազդատ Տերոյան, նշվ. աշխ., էջ 89:

<sup>20</sup> Տե՛ս «The New York Times», Published: August 1, 1920:

<sup>21</sup> Տե՛ս «The New York Times», Published: May 15, 1919:

<sup>22</sup> Տե՛ս James L. Barton, նշվ. աշխ., էջ 126:

<sup>23</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 446, թ. 1:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 20-21:

<sup>25</sup> Տե՛ս Ս. Ավետիսյան, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., էջ 159:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 169:

տանում Ամերկոմից ամսական օգնություն ստացողների թիվը կազմել է 103825 մարդ<sup>27</sup>:

Պակաս նշանակալի չէր նաև Ամերկոմի գաղթականախնամ գործունեությունը, որը թեև ժամանակագրական առումով ընդգրկում էր ավելի նեղ շրջանակ, սակայն ևս անգնահատելի օժանդակություն էր հայ ազգաբնակչությանը: Ամերկոմի սննդակայաններ էին գործում Ալեքսանդրապոլում, Քանաքեռում, Դարաչիչակում, Ղամարլուում և այլուր: Միայն Ղամարլուում գործող 7 սննդակայաններից օրական օգտվում էին 7-8 հազար գաղթականներ և տեղացի չքավորներ<sup>28</sup>, էջմիածինում այդ թիվը հասնում էր 4300-ի<sup>29</sup>:

Անգնահատելի է Ամերկոմի գլխավոր քարտուղար Չարլզ Վիքրիի ձեռնարկած «Որբերի կիրակի» կամ «Ոսկեղեն պատվիրանքը» նվիրատվական միջոցառման նշանակությունը, որը նրա նախաձեռնությամբ կյանքի կոչվեց 1923 թ. Ժնևում կայացած Ամերկոմի հերթական ժողովներից մեկում: Բարեգործական այս միջոցառումը կոչ էր՝ ուղղված Ամերիկայի բոլոր բարեկեցիկ ընտանիքներին, որոնց առաջարկվում էր յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի առաջին կիրակի օրը իրենց կանոնները գրել սովորականից ավելի ճոխ սեղաններից և այդ միջոցով գոյացած զգալի խնայողությունները տրամադրել հայ որբերին<sup>30</sup>, որի շրջանակներում Ամերկոմի գործունեությունը հովանավորվեց 1923-1925 թթ<sup>31</sup>:

Գործունեության ամբողջ ընթացքում, ընդհանուր առմամբ, Ամերկոմը ծախսեց մոտ 91 միլիոն 150 հազ. դոլար<sup>32</sup>: Ամերկոմի համեմատությամբ թեև անհամեմատ փոքր, սակայն հարյուրավոր որբերի և գաղթականների փրկության համար ոչ պակաս կարևորություն ունեցող միջոցներ ծախսվեցին նաև Անգլկոմի կողմից:

Ամերկոմի համեմատությամբ Անգլկոմի գործունեությունը ներառում էր ավելի նեղ շրջանակներ: 1923 թ. դեկտեմբերի դրությամբ (Անգլկոմի գործունեության ամենաեռուն շրջանում) Անգլկոմն իր խնամակալության տակ ուներ արդեն 4 որբանոց (նույն թվականի մայիսին որբանոցների թիվն ընդամենը 2-ն էր՝ 160 սաներով), որտեղ ապրում էր 483 երեխա՝ 243 տղա և 240 աղջիկ: Կոմիտեի հովանավորության տակ էին գտնվում նաև մեկ հիվանդանոց, մի քանի արհեստագործական դպրոցներ և մեկ հանրակրթական դպրոց՝ 513 աշակերտով: Դպրոցներում որբերի հետ համատեղ ուսանում էին նաև կոմիտեի աշ-

<sup>27</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 30, թթ. 98-104:

<sup>28</sup> Տե՛ս **Ս. Ավետիսյան**, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., էջ 34:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 37:

<sup>30</sup> Տե՛ս **Է. Մելքոնյան**, Հայ բարեգործական ընդհանուր միության պատմություն, Եր., 2005, էջ 143:

<sup>31</sup> Տե՛ս «International Golden Rule Sunday», էջ 38:

<sup>32</sup> Տե՛ս **Ս. Ավետիսյան**, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., էջ 191:

խատակիցների երեխաները<sup>33</sup>: Որբերի խնամքին զուգահեռ՝ Անգլկոմը ևս իրականացնում էր գաղթականախնամ գործունեություն: Անգլկոմի սննդակայաններ էին գործում Երևանում, Աշտարակում, Ղամարլուում, Բաշ-Գառնիում, որտեղ օրական սնունդ էր տրամադրվում 5800 երեխաների ու գաղթականների<sup>34</sup>:

Անգլկոմի կողմից միայն 1922 թ. ընթացքում Հայաստան էին ներմուծվել 65 վագոն զանազան ապրանքներ<sup>35</sup>: Նույն թվականին ֆոնդի հավաքած ընդհանուր գումարը կազմել էր 30000 ֆունտ ստեռլինգ, որի զգալի մասը ուղարկվել էր Երևան<sup>36</sup>:

Այսպիսով, ընդհանրացնելով բերված փաստերը, կարող ենք ասել, որ և՛ Ամերկոմը, և՛ Անգլկոմը տարածաշրջանում ծավալելով մարդասիրական գործունեություն, հետապնդել են իրենց երկրների աշխարհաքաղաքական ուղղվածությամբ պայմանավորված հեռահար նպատակներ, որի հետևանքով վերջիններիս հարաբերություններում հաճախ դրսևորվել են փոխադարձ քննադատական մոտեցումներ: Գործունեության քաղաքական ենթատեքստը առավելապես արտահայտվել է որբերի գիտակցության մեջ արևմտյան արժեքների սերմանմամբ: Սակայն միաժամանակ անժխտելի է այս կազմակերպությունների ունեցած մեծ ավանդը հայապահպանության գործում և այն անզնահատելի օժանդակությունը, որ ցուցաբերվեց Հայաստանի առաջին Հանրապետությանը, ապա՝ Խորհրդային Հայաստանի իշխանություններին՝ կազմակերպելու հազարավոր անօթևան գաղթականների և որբերի խնամատարությունը: Որքան էլ տարաբնույթ և իրարամերժ են խնդրի շուրջ ձևավորված տեսակետները, մեր կարծիքով, այս երկու կազմակերպությունների գործունեությունից բխող դրական հետևանքները անհամեմատ գերազանցում են բացասականը, և առանց նրանց տրամադրած օգնության Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին շատ դժվար, կարելի է ասել՝ անհնարին կլիներ հաղթահարել հայ ժողովրդի համար անչափ ծանր սոցիալ-տնտեսական խնդիրները:

**СУРЕН АВЕТИСЯН – Деятельность США и Великобритании в поддержку армян после Первой мировой войны.** – Американская и британская помощь, оказанная армянскому народу в труднейший для него исторический период, впоследствии воспринималась отнюдь не однозначно. В статье обобщаются факты, зафиксированные в архивных документах, и разные подходы к исследуемой проблеме. Несомненно, что, осуществляя в Армении гуманитарную деятельность, и США, и Великобритания

<sup>33</sup> Տե՛ս **Ս. Ավետիսյան**, Փաստաթղթեր 1920-ական թվականներին Անգլիական օգնության կոմիտեի (Անգլկոմ)՝ Հայաստանում ծավալած գործունեության մասին, էջ 69:

<sup>34</sup> Տե՛ս **Յ. Մելիքսեթյան**, նշվ. աշխ., էջ 102:

<sup>35</sup> Տե՛ս **Բ. Պողոսյան**, Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում (1914-1923 թթ.), Եր., 2005, էջ 147:

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 151:

ния, соответственно в лице АмериКома и АнглиКома, преследовали при этом и свои далеко идущие цели, обусловленные их геополитическими интересами. Тем не менее, эти организации оказали неоценимую помощь правительствам и народу РА и советской Армении. Благодаря ей удалось поддержать и спасти от гибели тысячи бездомных беженцев и сирот, и это в значительной мере перекрывает отрицательные стороны, связанные с деятельностью названных комитетов.

**SUREN AVETISYAN – *The Activity of the USA and the United Kingdom of Supporting Armenians after World War I.*** – The article discusses the problem of the mixed perception of American and British relief, given to Armenian people in the hard historical period after World War I. Summarizing the facts fixed in the archival documents and various approaches to the question under investigation, the author comes to the conclusion, that both the USA and Great Britain, as accordingly represented by the AmerCom and the AnglCom, realizing humane activity in Armenia, have studied its own geopolitical interests. At the same time both of this organizations have rendered an invaluable support to the Government of RA and later on to the Government of Soviet Armenia, to organize the relief of thousands of refugees and orphans that in the final analysis indemnifies for the negative consequences associated with their activity.